Արձանագրություն N 2

«Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ հագեցման համար անհրաժեշտ կահույքի պատրաստման աշխատանքների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԱՇՁԲ-2024/7» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «13» «Հունիսի» 2024թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Բաբայան
Հանձնաժողովի անդամներ Վ. Վահանյան, Ա. Գևորգյան, Հ. Խուրշուդյան,

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 03.05.24թ. հրապարակվել է հրավեր armeps համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանել՝ 2024 թվականի մայիսի 15-ին, ժամը 12:00-ին: 2024 թվականի մայիսի 15-ին ժամը 16:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Ստրոյիննովացիի» ՍՊԸ	matevosyan.23@list.ru	04243812
2	«Մանվել Մաթևոսյան Վահանի» ԱՁ	manvel.matevosyan.75@mail.ru	23208759
3	«Շինարար-Ագրո» ՍՊԸ	gnumner2020@mail.ru	01310118
4	«Տան Շին Գրուպ» ՍՊԸ	amigo77785@mail.ru	09428368
5	«Ֆասթ Քոնսթրաքթ» ՍՊԸ	fastconstraqt@gmail.com	00919832
6	ԱՁ Պետրոս Աթոյան	apeto1981@gmail.com	28183345

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Բաբայան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Բաբայան)

ԱՁ Պետրոս Աթոյանի կողմից ներկայացված մասնակցության հայտը ենթակա է մերժման, քանի որ վերջինիս կողմից ներկայացված մասնակցության հայտի Հավելված 2՝ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և ենթակա չէ շտկման:

Մնացած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում բացակայում էին հրավերով պահանջվող կահույքի պատրաստման աշխատանքների ընթացքում իրենց կողմից պատրաստվող ապրանքների

տեխնիկական բնութագրերը՝ որը պետք է ներկայացնեին Աղյուսակ 1-ով: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները, գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps համակարգով 30.05.2024թ. ծանուցել է բոլոր երեք մասնակիցներին հետևյալ շտկման ծանուցումը.

Հարգելի մասնակից:

ՀՀ ԱՆ ԳՀԱՇՁԲ-2024/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ձեր հայտում արձանագրել է անճշտություն՝ որը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները ենթակա է շտկման:Մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է Ձեր կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ Աղյուսակ 1-ը, նշելով տեխնիկական հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Շտկված փաստաթուղթը՝ Աղյուսակ 1-ը անհրաժեշտ է ծանուցվելուց հետո մեկ աշխատանքային օր հետո՝ Ձեր կողմից հաստատված ուղարկել գնման ընթացակարգի քարտուղար՝ Հասմիկ Սարգսյանի hsargsyan@moh.am էլեկտրոնային հասցեին: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03/1804 հեռախոսահամարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Բաբայան)

30.05.2024թ. հայտերի գնահատումը կասեցվել էր բոլոր երեք մասնակիցների կողմից ներկայացված հայտերը թերի, ոչ ճիշտ ներկայացնելու և վերջիններս շտկելու նպատակով:

03.06.2024թ. դրությամբ՝ սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին ծանուցված բոլոր մասնակիցները ներկայացրել էին պահանջվող շտկված փաստաթղթերը՝ Աղյուսակ 1-երը՝ կահույքի պատրաստման ժամանակ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը: Գնահատելով վերջիններս գնահատող հանձնաժողովը շտկումներ ներկայացրած մասնակիցների հայտերը գնահատեց բավարար:

Որոշվեց. Շտկումներ ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ա. Բաբայան)

15.05.2024թ.՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին մասնակիցների կողմից ներկայացված գները ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԳՀԱՇՁԲ-2024/7» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր «Մանվել Մաթևոսյան Վահանի» ԱՁ-ի հետ, ընդ որում պայմանագրային գումարը կկազմի 5,633,000 ՀՀ դրամ (իսկ գնային առաջարկը ներկայացվել է հրավերով սահմանված ձևով՝ 665,800 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ՝ կահույքի առանձին ապրանքների միավորի գների հանրագումարով):

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԳՀԱՇՁԲ-2024/7» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 08.06.2024թ.-ից մինչև 17.06.2024թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բաբայան

Անդամներ՝ ---------- Վ. Վահանյան

---------- Ա. Գևորգյան

_____ Հ. Խուրշուդյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

«Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ հագեցման համար անհրաժեշտ կահույքի պատրաստման աշխատանքների ձեռք բերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգին ներկայացրած գնային առաջարկները 15.05.2024թ.-ին հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

NN	Ծառայության անվանումը	Գնման գին	«Մանվել Մաթևոսյան Վահանի» Ա/Ձ			«Ստրոյիննովացիի» ՍՊԸ			«Տան Շին Գրուպ» ՍՊԸ		
			Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար
1	Կահույքի պատրաստման աշխատանքներ	737,500.00	554,833.33	110,966.67	665,800.00	574,166.67	114,833.33	689,000.00	642,250.00	128,450.00	770,700.00

«Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ հագեցման համար անհրաժեշտ կահույքի պատրաստման աշխատանքների ձեռք բերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգին ներկայացրած գնային առաջարկները 15.05.2024թ.-ին հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

NN	Ծառայության անվանումը	Գնման գին	«Շինարար-Ագրո» ՍՊԸ			«Ֆաստ Քոնսթրաքթ» ՍՊԸ			«Պետրոս Աթոյան» Ա/Ձ		
			Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար
1	Կահույքի պատրաստման աշխատանքներ	737,500.00	695,750.00	139,150.00	834,900.00	759,583.33	151,916.67	911,500.00	4,812,000.00	0.00	4,812,000.00